


ՏԻՐ ԵՒ ՏՆՈՐԻՆ
Ե, ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել
Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ Կրպարի
ԳԱԶԻՐԷ (Եղիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան որչ դասիկն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՈՒԿ
Եւ թղթատարի ծախքը
Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղուած
գրութիւնք էս չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
Կանխիկ վճարելի են

ՆՈՐԱԿԱԶՍ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՍԸ



Միջավայրեր կան, որոնք, հակառակ
իրենց լուրջ գառնութիւններուն, կարող
էին ստեղծել և ընծայել հայ գաղութնե-
րուն համար ուրախացուցիչ հանդամաքներ,
եթէ միայն մենք լուրջ ու շրջահայեաց կեր-
պով գիտնայինք այդ վայրերէն օգտուելու
եղանակը :

Հայերս մեր մայրենի բնաշխարհին մէջ
յաճախ փափաքած ենք ունենալու այս կամ
այն օգտակար ձեռնարկը . լուսագոյն ծրա-
գիրներով ոտքի ելած, կազմակերպած ենք
ընկերութիւններ յառաջդիմական ու շահա-
գիտական նկատումներով ղինուած . բայց
մեր այդ ծրագիրներուն ամենը ջուրն ըն-
կած, կամ անգործադրելի մնացած են յա-
ճախ . յայտնի պատճառներով . — մեր
լուսագոյն ձգտումները իրենց սաղմին մէջ
խեղդող հակառակորդ շրջապատող տարրե-
րու բազմութեամբ գծազդուութիւնն ենք ու-
նեցած ընդ միշտ : Օրինակը աւելի համոզ-
կէկ է . վեր առնենք մեր տաճկահայերը և
ուսահայերը, որոնք մեր ազգի կենդա-
նութեան սիրտ ու թոքերը կը կազմեն : Կա-
րելի է լսել թէ ընդհանուրիս օգտին հա-
մար ծառայող բան մը մնացած չ'է այլևս,
որ մեր այդ երկու կեդրոն մեծ միջավայ-
րերուն մէջ ձեռնարկած, փորձած չ'ըլլանք,
ու յաջողած ըլլանք : Այս նեղ սիւնակնե-
րուն մէջ մի առ մի յիշել ու ծանրանալ
այդ ձեռնարկներուն վրայ աւելորդ կը լի-
նի . անոնցմէ մէկը միայն կ'ուզեմ մէջ բե-
րել և քննել :

Ամենուս յայտնի է թէ Կովկասահայե-
րը սակէ տասնեակ տարիներ առաջ բոլոր
հայերուս մէջ ընթերցման և զարգացման
մեծագոյն զարկ տալու համար թիֆլիսի մէջ
հիմնած էին « ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ »-
ը . գուցէ հայ մը չ'գտնուի
այսօր, որ չ'գիտնայ թէ այդ ընկերութիւ-
նը այս տարուայ սկիզբները առաջին փուլի
իր մահկանացուն կ'ընդ կայսերական մէկ
սառն հրամանով . պատճառը նիւթական
անյաջողութիւնը չ'էր, ընդհակառակը 50-
000 ռուբլի գրամագլխով մը և հազարա-
ւոր հատորներու պահեստով մը փակուե-
ցաւ Հայոց Հրատարակչական Ընկերութեան
գուռը . պատճառը Կովկասահայոց անհե-
ռատես եռասորութիւնն էր : Եթէ մեր վը-
րը ցող ու սնամէջ Կովկասահայ եղբայրնե-
րը տարիներ առաջ թափանցած, հեռատե-

սած ու համոզուած ըլլային թէ ուսական
ձուլիչ քաղաքականութիւնը ո'չ միայն ամ-
բողջ հայութիւնը կ'ըլլելու, այլև անոր հա-
ու ձանգերն անգամ ուսացնելու խարդա-
ւանքներով տնդահարուած է, այսօր այդ
խոշոր փորձանքը պայթած չ'էր լինէր մեր
գլխուն, ու հայութիւնը գոնէ, իր մայրե-
նի երկրէն դուրս թող լինէր, նպատակա-
յարմար միջավայրի մը մէջ կանգուն կ'ու-
նենար այդ կարևոր հաստատութիւնը . և
որովհետև մեր այդ Կովկասահայ փքուած ան-
հեռատեսները միշտ սա սկզբունքն են ու-
նեցած թէ « ուր սիրտք ձեր են անդ և գանձք
ձեր եղիցին », հետեւաբար ապագայի մէջ գեռ
չ'առ անգամներ պիտի ունենան այդ կարգի
կորուստներ, եթէ չ'փութան իւրենց այդ
սկզբունքը փոխել հրէսկան բարբերու յա-
աուկ հետեւեալ բանաձևին թէ . « ուր որ
մեր անձն ու գանձք ապահով են մեր սիր-
տը ժամանակաւոր կերպով հոն պէտք է
լինի, առանց զայն հայրենիքէն մշտնջենա-
պէս բաժնելու : »

Ինչպէս է ըմբռնել թէ ազատ միջա-
վայրեր բացարձակ առաւելութիւններ ու-
նին նպատակներու տեսակէտով : Ռուսիոյ
կամ Տաճկաստանի հայերուն նիւթական վի-
ճակը, եթէ այն լինէր նոյն իսկ ապահո-
վագէս գերազանց մեր գաղթավայրերու
հայրենիք, դարձեալ առաւելութիւն մը չը
պիտի տար իրենց, որ անոնք լինէին բա-
ցարձակագէս հետեւող իրենց բոլոր ազատ
ձգտումներուն, քանի որ այդ երկիրներուն
մէջ ստրկացման քաղաքականութիւնը տի-
րապետող մշտնջենական ձև մ'է առած .
բայց մի՞թէ թիֆլիսի ծայր չ'տեսնելու չափ
կարճատես ու կոյր ըլլալու ենք, որ երբ մեզ
կը ներկայանան, նոյն իսկ մեր կամքէն ան-
կախ պատճառներով, առիթներ, որոնցմէ
կրնանք օգտուիլ, չ'օգտուինք : Գաղթական
հայը, կարելի է լսել, այսօր ամենուրեք
է . մանաւանդ հոն, ուր ազատ կ'զգայ զին-
քը, ազատ իր ձգտումներուն բոլոր թա-
փովը :

Ինչո՞ւ ուրեմն չ'ստեղծել այդ ազատ
միջավայրերուն արժանավայրել կարելի ե-
զող ամեն տեսակ շարժուն ու օգտակար
կեանք : Մենք միմիայն լալ գիտենք երբ
մեր հիւանդը կը մեռնի . բայց գիտնալու
ենք և մեռնող հիւանդի յիշատակը կանգ-
նեցնել արձագանքող և փոխարինող նը-
մանօրինակ մի նոր ստեղծագործութեամբ :
Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերու-
թիւնը պիտի մեռնէր, և մեռաւ . գիտնանք
անոր սեղը ուրիշ աւելի յարմար միջավայ-
րի մը մէջ նոր և աւելի խորիստ հաստատու-
թիւն մը կանգնեցնելու գաղափարը :

Ուրախ եմ աւելուելու թէ այդ պէտ-
քին գոհացում տալու միակ նպատակով
քանի մ'ամիսներէ ի վեր Գազիթի մէջ րա-
նի մը յառաջդիմաւոր երիտասարդներու
խաձեռնարկ եղած են « Հրատարակչական
Ընկերութիւն » մը կազմակերպելու բուռ-
կան լայն ծրագրով, և արդէն այսօր կամ
վաղն իսկ կ'աւարտեն իրենց անդրանիկ հը-
րատարակութիւնը, որ է « Ազգային Սահմա-
նագրութիւն Հայոց », որը 1863 ին սպաղըր-
ուած և սպառած էր արդէն : Արժէ որ Գա-
զիթի նորակազմ Հայոց Հրատարակչական
Ընկերութեան այդ երախայրիք ու մաքուր
սպաղըրութեամբ հրատարակութիւնը ունե-
նանք մեր սեղաններուն վրայ . զայն ունե-
նալ կրկնակի օգտակար քայլ մ'ընել ըսել
է, որով նախ ներկայ սերունդս տեղեակ
կ'ըլլանք Ազգային Սահմանագրութեան բուն
սպաղըր, և երկրորդ Գազիթի Հայոց այս նո-
րակազմ հաստատութիւնը քաջալերած կ'ըլ-
լանք :

Ամեն յաջողութիւն ցանկալի է այդ
ընկերութեան, մանաւանդ Գազիթի նման
միջավայրի մը մէջ, ուր այդ Հրատարակչ-
ական Ընկերութիւնը նպատակայարմար ա-
զատ միջավայր մը ընտրած է իրեն համար,
որուն ո'չ հիւսիսի երկայնաբազուկ Արջին
թաթը կը հասնի, և ոչ ալ արեւելքի ա-
րիւնուշտ Վամբիրին աղտոտ ցուկը :

ԱՎՕ

ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ

ՄԻՍ ԹԷ ՊՏՈՒՂ

Բջջային փոխանակութեան յանրացումը,
այդ կենսական շարժման խանգարումը մի՞թէ
ծախքերու նուազման արգասիք է : Բնաւ, ըստ
որում մենք անանկ դարում մէջ կ'ապրինք, ուր
մարդ կրկին ծախքերով կը սնանի : Ոմանց վա-
յելու գերատեղեան փութկոտութիւնը, եւ ո-
մանց՝ անհամեմատ զօրաւորներու դէմ՝ ահամայ
մաքառելու հոգերը անդադար հարկադրեցին
շարժման ցնեղու մեր մտաւորական բոլոր կա-
րողութիւնները : Մտաւոր պահեստի պակասութիւ-
նը ամեն կազմութեան մէջ ակնհայտ զգալի ըլ-
լալով՝ ճար ու դարման պանել որոշուեցաւ : Սա-
կայն ինչ սպասել կարելի է պահեստի գանձը
թափուր կողմ կառավարութեան մը, երբ շրջա-
պատուած է մանաւանդ անհամար թշնամիներ
ով, եւ որ փոխանակ իմաստութեամբ տեղի
տալու, կը յամարի կուռի կարողութեան խիստ
վեր ճիգեր ընելով : Սոսկալի՜ անկուս մը . . .
Մտաւոր պահեստի այս թափուր վիճակը՝
բանի անբնական ճիգերու կնիքակերպ մեր գան-
կը՝ ծնունդ տուաւ անկապաշտ գաղափարներու,

ՏՕՔԹԵՈՒ ՆԵՎՐՈՒԶ

Իր բնական թիւերը փոխադրած է ճարա-
էլ-Մանախ, նորաշէն պանք Սթոմանի
դէմի կարգը, Մէլզօն Հէլլէր թիւ 28, ա-
ռաջին յարկ :

Հիւանդ կ'ընդունի բոս առաջինն ա-
ռաւօտեան ժամը 8-9 և կէս օրէն վերջ
ժամը 3 էն 5 :

Հ Ն Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ. Պօլիս 16 Մայիս. — Բարձրագոյն
Գուռը գեապաններուն նոր ծանուցագիր մը
զրկելով՝ դաւակցութիւն կը յայտնէ զրկած
նախորդ ծանուցագրերով գեապաններուն
գերազանցածութիւնը վերաւորած ըլլալուն
համար, և ունեց շաղկուցութիւնը կը խնդ-
րէ, արգիլելու համար օտար թղթատուն-
ներու միջոցաւ ներմուծուող խոտլարար
գրութիւններն ու մաքանեհուցութիւնը :

Կ. Պօլիս 16 Մայիս. — Սելանիկի նախ-
կին կուսակալ Հասան փաշան Պօլիս հաս-
նելով՝ Սուլթանին կողմէ մասնաւոր ուն-
կընդրութեան արժանացաւ, ուր մանրա-
մասնօրէն պարզեց Պուլիարական խոտլու-
թիւններու առթիւ իր կատարած սխալոր-
ծութիւնները . . . :

Զօրավար Նէճիպ փաշան Սէլանիկի կու-
սակալ անուանուած է :

Սօֆիա 16 Մայիս. — Երկրին ներսերը
տիրող յուզումներուն հետեանօք՝ հակիշ-
խանական շարժման մը վախերը կը բազ-
մապատկուին :

Իւրթատուն 16 Մայիս. — Հարիւր մար-
դէ բաղկացեալ Պօէրական նոր շոկատ մը
Գարի գաղթավայրը մտած է : Զօրաց կը
չըլլի թէ Տը Ուէթ գաղթավայրին մէջ կը
գտնուի :

Ս. Բեթէրպարկ 16 Մայիս. — Պէր-

դին՝ օրհնեալ բազուկով պատուական ապտակ
մըն է կ'իջնոյ աղուն քթին բերնին, տապա-
րով փայտ կտորելու պէս . . . : Ես'իս. կեցցէ՛
պէ՛ : Զարնելէն ետքը՝ ասանկ զարնելու է : Ապ-
տակահար տղան շքեղ ձայնաւորութեամբ լաց
մըն է կը փրցնէ, փառաւոր սկզբնաւորութեամբ
այն լացերէն որոնք կ'զգաս թէ անանկ մէկ եր-
կու վայրկեանէն մարտիք լանք չ'են, այլ
տեւելաց են, տեւելոց : Աղջիկները ու կիները
զող կ'ելլան. մայրը կը յուզուի. Սարգիս ա-
ղան կը միջամտէ, տանկերէն լեզուաւ . . . :

— Զգէ՛, ճանրմ, ձգէ՛ տղան. ասանկ գի-
չեր է :

Պախալ Սարգիսը նեղուած է այս անհամ
միջոցակէն որ երեկոյթը կը խանդարէ : Յօն-
քերը կը պոտտէ ու իրարու վրայ կը ծխէ :

Տղուն լացը խաղ մը ես կը բարձրանայ.
զեռ բարձրանալու ալ միտք ունի :

— Բա՛ մեղայ ասանկ ալ՝ կը զարնեն ե-
ղեր . . . :

Մայրը մարելու կ'ըլլայ և տղան առկին
կ'անէ բուռն շարժումով մը. էրկանը կրեալ
խոթոս խոթոս նայելով

— Զօնուխին երեսը նոյն՝ մէյ մը. կաս
կտարու է եղեր. մէկէն ի մէկ զարնել կ'ըլլայ՝
ատանկ եղեկնեսիկն. աղան վախցաւ ևն. ևն՝ փե-
սը բռնուեցաւ . . . :

— Տղան վախցաւ, յանկարծակիի եկաւ,
կ'ըսեն մէկ քանի խաթուններ. ջուր խոցուցէ՛ք,
ջուր :

Ապտակին պատճառ եղող աղան՝ իրենէն
աւելի զօրաւորը տեսնալով՝ գագրեցուցած է իր
լացը. ծնողքը կը նեղանան անոր դէմ. միւս

ասկէն թերիայ մտերմ ու խմորեալ ըմպելիներ-
ով գորացնելու (°) խօլ նպատակը ծաւալեցաւ.
ամեն ուրեք : Մարդ ի մանուկեան որոշ բան
մը չ'գիտեր այն բարիքներուն վրայով՝ զորս
կրնայ վայելիլ, ապագայ աղէտներուն առջեւ
միակ պաշտպան հանդիսանալու առանձնաշնոր-
հումը վայելող սակաւապետութեան շնորհիւ,
և կը վարժեցնէ իր ստամոքքը հանդուրժելու
անգրական գերապատիկ ծանրաբեռնութիւննե-
րու, մինչև որ դժնդակ դժուարամարտութիւնը
զգացնէ իր ներկայութիւնը ցաւալի ազգարա-
րութիւններով : Ելեքարական զօրութեամբ ըն-
թանալու համար պատրաստուած մեքենայ մը
բարիչով վարել փորձելը, սոսկ զայն խանդա-
րել կը նշանակէ, և փոխադրած բարբ : Մարդ՝
դժուարամարտութեամբ տառապելէ վերջ, յօ-
գագարութիւն յառաջ բերող կերակուրները չա-
րաչար գործածելու պէտքն իսկ չ'ունի, ինչու
որ սոսկ անոնց շարունակական գործածումը
բաւական է յորինուածը տակաւ յոռեփոխելու,
և ևն թողիկ ընելու գործարանային ու զըն-
դերային հիւսուածակաթնութեան (selérose),
կանխահաս ծերութեան ու տարածած մահուան :
Այս կենցաղավարութեամբ ապրող մէկուն
սերնդական յաջողութեան մէջ նկատելի տու-
ջին պատուհանները պիտի ըլլան այլասերած
ու ամուլթիւն : Տղայոց սակարակութեան (ya-
chitisme) գլխաւոր պատճառը մանր գործածու-
մըն է : Միւսը կը խանդարէ բուռն, մտաւորա-
կան զարգացումն ու բարեշրջումը կը խափանէ,
կը փոխէ նկարագիրը, և վատթարագոյն գըր-
զումներ կը պատճառէ :

Կ. ՈՒՉՈՒՆԵՍՆ
(Շարունակելի)

ԱՍՏՈՒԾՈՅ ՄՈՒՍԱՅԱՐԸ
Երբ որ ամեն բան շինեց արարեց
Ոսի կանգնեցուց ակորին ձեռակերտ,
Մարդուն կենդանի իւր շունչը փրչեց,
Նորստեղծն օրհնեց ու մարդեց « Ո՛րք երբ » :

Ուսարին խորր գաղտ պահուած յար դեր
Մարդուն ետեւէն վազեց ու կըսէր.
« Անկն ինչ չ'աւ, Տէ՛ր, ըրի՛ր արդարեւ,
Բայց մտոցար դրնել Դու մարդուն մեջ Սէ՛ր . . . »
ԱՎՈ

լու, փշրելու, ստկելու բերաւոր ճղճիմ շշուկ-
ներով : Եւ բամբասանքը սկսաւ : Ա՛ն, ինչ լաւ
կը բամբասանի լիպիկայիով, պիտակով, կու-
տով . . . : Բամբասանքն ու ասոնք ինչպէս իրա-
րու յարմար են, ինչպէս դէմ կը բռնեն մի-
մեանց : Անոնց մանր մուտք, բեկբեկ ձայները
ի՛նչ ազնոր ընկերացում, ի՛նչ յարմար եզրի ու
թղկոց են բամբասանքին որ չնչին, կտոր բըր-
ճուկ, հոսկէ հոն ցատկատող խօսքերէ կը բող-
կանայ, որ անոնց պէս համով է, որ անմեղ ե.
րեւոյթով մը « չըթ » կ'ընէ մէկուն կը դպի,
« բըթ կ'ընէ միւսը կը խոցէ, ակուս կ'երկրցը-
նէ ասոր միտքը կը խաճնէ, ծնօտ կը խաղցնէ մէ-
կաւրին պատիւը կը ծամէ . . . :

Նայիս յանկարծ՝ երբ բամբասանքն ու կու-
տը ձեռք ձեռքի տուած մեծաւ համբարաշու-
թեամբ կը գործէին ի վնաս ուրիշին, խոչոր
լաց մըն է կը փրթի սենեակին անկիւնէն ուր
տղաքները խմորովն « փիսի փիսի բամպուղի .
. . » կը խաղան :

Ի՛նչ է ան, ի՛նչ կայ :

Լացող աղուն ծնողքը յուզուած կը մօտե-
նան, կը հարցնեն :

Հեկեկանքներու մէջէն տղան կ'ըսէ .

Աչտալ ինձի զարկաւ . . . :

Լացը կը շատնայ : Մայրը « վա՛խ ետվ-
րու՛մ » ըսելով ու զարնող աղուն երեսին յան-
դիմանական սաստիկ . . . նայուածք մը իջեցը-
նելով վերէն ի վար, տղան մէկ կողմ կ'առնէ
ու կ'կտի շոյի, անուշիկ, լուրղակ :
Յանցատուր տղուն հայրը, « Ախտէր » Տար-
ուսիք ասքի կ'ելլայ նայիս և մէկ երկուք չ'ը-
սած՝ ո՛չ ձեռքին նայելով ո՛չ ալ զարկած տե-

արտառոց խորհրդածութիւններու, գրական զը-
ռնիկի, փուճ արտագրութիւններու, որք վեր-
ջերս աւելի յեղիեղուկ ու անդրական մտքերու,
և հիւանդոտ ու անտրամարան ըղիղներու մէջ
զարգանալով՝ յորդեցին, և գրաւեցին վերջա-
պէս մտաւորական ընդհանուր հրապարակը :

Իմացական այս թան ու բոնին մէջ, երբ
արդէն քայքայուած էր նաեւ քարոյակակ շրջա-
նակին ամբակուտ պարիսպը, մշակարիտ ֆրիստնե-
ուրիւնը, ի՛նչ սկիւկալի կարելի էր կենցաղա-
վարական մտայար հարցի կարգադրութեան մա-
սին : Ընդհանրապէս գրգռող կերակուրներու ու
ըմպելիներու արդիւնք եղող անբարոյականու-
թիւնը այնպիսի ատորքինակ արեան ցանկութիւն
մը յոռաջ բերաւ վերջին տարիներս մարդուն
մէջ, որ ինքզինքնին քաղաքակրթութեան գա-
զաթնակէտը հասած նկատող ազգերը, ընդհա-
կատակը, հին դարերու մէջ ապրող ժողովուրդ-
ներէն աւելի գերազանց հակամեներ ունեցան
զէպի բարբարոսութիւն : Ռուսոյութիւնը՝ որ ի
նուսն թալարաբոսութիւնը կը յասկանի ինչէր, մեր
օրերը զբօսանքի կարգ անցաւ, (տեսէ՛ք անըզ-
գայութեան զարգացման աւազելի ու անհամե-
մատ գերիվերութիւնը) և գարգացուց ի մեզ ա-
րեւնեղութեան վայրենի զգացումը : Երկայիս
մէջ, ամեն ժամ, ընդգէմ մարդուն պատրաստուող
նորահնար կոտորիչ մեքենայներն ու զէնքերը,
և նորանոր եղանակներով կատարուած կոտո-
րածներն ու սպաննումները սկիւնիւ ապացոյց-
ներ չ'ունեն բարբարոսութեան, գազանութեան :
Ի՛նչ է այս յոռի զարգացման բուն շարժառե-
թը, մտերիմ ընթերցող : Չէ՛ որ մեր յոռի կեն-
ցաղավարութիւնը : Դարեր առաջ, նահապետա-
կան օրերու մէջ գէթ որոշուած էին ուտելի մի-
սերը, և մարդոյն սզնիւ, բարի ու հիւրընկալ
զգացումները այժմեան ինքնակոչ քաղաքա-
կիրթներուն զգացմանց չափ չ'էին բթացած :
Հին բարի սովորութիւնը, զեռ արեւելեան կէս
քաղաքակիրթ ու բուսակեր ժողովուրդներուն
մէջ նկատելի են : Մարդիկ որքան բազմապառ-
կեցին մանի առուակները, այնքան վայրագ ու
վաւաչոտ եղան, և գուրն ու բարեպաշտու-
թիւնը (իմացական ըսել կ'ուզեմ, և ո՛չ թէ
զգայական) բոլորովին չ'բացուցին յինքնանս :
Այ՛ո, ծայրայեղ կերուխուսներու եղանակներ
հնարուցան, ինչու որ չարաչար աշխատու-
թեամբ յառաջ եկած մտքի այս անանկ պարագա-
ներուն՝ մտածուեցաւ վաղահաս աղէտին առաջ-
քնն անուշ, և մարդկութիւնը իր մատող հա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
ՀԱՅՎԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՏԵՍՍԱՐԱՆՆԵՐ (5)

ԵՐԵՎԱՆԻ ՄԸ
ԿԱՄ
ՊԱԽԱԼ ՍԱՐԳԻՍԻՆ ԱՆՈՒՆԸ

(Շարն. ևսխորդ քիւնկ)
— Օ՛խ, կ'ընէ Սարգիս աղա յետին ունայ
մը ես խմելով և գաւաթը աղջկան տալով. ասոր
հետ մէկտեղ սուրճն ալ աղէկ տեսակէն է հս' . . .
Վերջապէս մարդը նպարտվածաւ է :
Սենեակին տարութիւնը վերջին աստիճան
է :
— Սա գուռը քիչ մը բանայիք . . .
Դուռը կը բացուի և հետը ուրիշ բաներ
ալ. կոճակներ կը քսկուին, բաճկոններ, բաճ-
կոնակներ, գօտիներ կը թուլնան : Ասոնց ար-
գիւնքը կ'ըլլայ ամեն կողմէ արձակուող սիրո-
փանքի հաւաչներ :
— Աղջիկ, ըսաւ Տանտիկինը. քիչ մը լիպ-
իկով չեխրեկի բեր տե՛ եղեկնի՛ր ըլլաւք . . . :
Արտակ պահարտներ բացաւ, ու երկու լե-
ցուն պնտակներ անուշով մէջէն՝ նորէն գոցեց և
բերաւ հրամցուց. մէյ մէկ ափ տաին ամենքն
այ ու սենեակին մէջ սկսաւ կզակի անվերջ ե-
բերում մը, — բոլոր կզակներուն. — կոտորե-

լինի մէջ Ռուսական նոր փոխառութեան մը բանակցութեան մասին լուրեր կը պատմուին :

ԱՅՍԻՄԻՈՒԹԻՒՆ

Նորէն չարաչառք լուրեր կը շրջին բարի մարդոց բերանը, որոնց չհաւատարու ամենեւին պարտաւոր չենք : Կըրուի թէ՛ տեղւոյ Պատ . Բազար . Ժողովը այս օրեր պաշտօնապէս զեկուցած է Պէնի Սուրէնի անդամաւոր Վարժարանի Տնօրէնին, որ վարժարանական տարեգլխէն սկսեալ բոլոր պաշտօնեաները հրատարեալ պիտի նկատուին : Հարկաւ մեր համալսարանական Հայր Տնօրէնը ասոր վրայ բարդ ու բաւարար եղած, իր սկսած Սոցիալական ուղեւորութիւնը կիս կատար մէկ կողմ թողելէ վերջ, լուրջ կերպով այդ հարցով պիտի զբաղուի որովհետեւ կ'երեւայ թէ փոքրիկ հարցին պիտի բաղաւաղի և անօթի փորն ալ Պարոնեանի Արիստով աղայի փորնն նման ո՛չ « Զէն-Հոգեւորէն » բան մը պիտի հասկնայ, ոչ ալ վարժարանի Տնօրէնին Սոցիալական նօթերէն, ինչպէս որ մենք և շատերը այդ պօշոյրապարհներէն բան մը հասկցած չինք :

Կը վախճանք թէ, եթէ տարածուած լուրը ստույգ է, մեր վարժարանի Տնօրէնն ալ շուտով Գարբիէլ Բահանայ Զէնծիրճեանի օրերուն կը հասնի . . . Երբեմն վարժապետութեան վախճանը քահանայութիւնն էր, իսկ հիմա, կ'ըսեն թէ, քահանայութեան վախճանը մէջնակեանքի շրջան կը լինի : Վարժարանի մնացեալ պաշտօնէից ճակատին վրայ ալ այս օրեր վշտախառն ամբար կը նկատուէին . ու հիմա կը հասկնանք պատճառը . խեղճ մարդակներ, երեւի թէ կը մտածեն որ արդեօք մինչև ներկայ ուսումնական տարւոյն աւարտը իրենց հացադործին ու նպարավաճառին, սրճարանին ու սափրիչին, տան վարձքին պարտքերը չ'գո-

տղաքը կը փոխան իրարու մէջ խեղդուկ քրքրէնքով . աղուն հայրը, լացէն, մօրը խօսքերէն և իրեն իսկ ըրածէն զայրացած՝ աղուն վրայ կը նետուի նորէն ծեծելու :

— Զայնդ կարէ՛, ծօ՛ շուն, հիմակ կը ստակեցնեմ հո՛ր քեզի :

Կիները մարդուն փէշերէն կը քաշեն . էրիկ մարդիկ թեւեւին կ'երկնցնեն հաշտարար ու խափանիչ . մայրը աղան ծոցին վրայ կը սեղմէ ու երկու ձեռքով վահան մը կը շինէ անոր՝ հայրենի կատաղութեան դէմ, և « չ'ես մըջնա՛ր » մը կ'արձակէ Տարաւիչ աղային երեսն ի վեր . Սարգիս աղան սնդիկն « տեղը նըստէ պէ՛, արեւա՛ր » կը պոռայ աստիակաբար սրանեղութեամբ : Տղան ինքզինքը այսքան ամուր ու սիրեղիբական կերպով պաշտպանուած տեսնելով՝ լացը յարկ մը եւս կը բարձրացնէ : Սենեակին մէջ կատարեալ խառնակութիւն մըն է կը տրեք, որուն շնորհիւ անուր կ'անցնին Պախալ Սարգիսին մէկ քանի հայհոյութիւնները : Ամենքն ալ կը խօսին սենեակին մէջ . « ամեն գլխէ մէկ մէկ ձայն կ'ելլայ » :

Քա՛ գէշ վախցաւ աղան .

— Եւ ի՞նչու վէրէ՛մի » չ'ըլլայ նէ շատ բան . Բառուսները համբերու է .

— . . . ընկ տալու է աէ խմցնելու է .

— Ի՛նչ սուս Տիգրան, ալ՛ անցաւ, հերի՛ք է . վա՛խ ետարու՛մ վա՛խ, մի՛ լա՛ր . առ քեզի շնայիպի . . . :

— Զօնախին յոխու՛մ մը բե՛ր կը պոռայ Սարգիս աղան .

— Նարինջ մը բե՛ր կ'ըսէ տանտիկինը :

— Բան մըն ալ չ'ուզեր, կը գոչէ, կասա-

ցած պիտի արժանանան իրենց հաշտեփա- կրն ընդունելու :

Է՛հ, ինչո՛ւ չէ, պէտք է որ հինցած աւելի կոթի պէս գոնէ տարին մէկ անգամ վարժապետները փոխուին : Վարժապետութիւնը աղտոտ փոխարդի մը կը նմանի և քրմահաճոյքի գործիք մինչդեռ անգին՝ առանձնորդարանը Աւելեասի արտօններուն կը նմանի, սրանց մէջ տակաւին կը պաշտօնավարեն եգիպտահայութեան ամբողջ պատուհասները . երեւի թէ հնութեան կարգով ճգնաւոր Պապա Խաչատուրէն վերջ եկող այդ անթիքները իրենց 25 ամեայ յօրեւեանին հասցնելու համար կը պահուին, ու օրին մէկն ալ հանգստեան թողալի կ'արժանանան . . . :

Ա՛յս է արդարութիւնը . վարժապետներուն ստացած քանի մը փարսն միայն կը տեսնուի . մինչդեռ անգին յաճախ, ամեն բանի տակէն պատահաբար սիրող պաշտօնեաներ կան, որոնք ամեն օր իրենց մանածը կը ներկեն և օր մը չ'են բռնուիր . ասոր կ'ըսեն իշուն չ'հասնել փայլունը ծեծել :

Մենք այս առթիւ ևս ներկայ ուսուցիչներուն « գլուխնիդ ողջ կենայ » ըսելէ, և ապագայ ընտրութեան թեկնածուներուն ալ « տարի մը վերջը ձեր գլխուն գայիք գլխին ալ այս է » ըսելէ վերջ, կը մնանք Քալ . Ժողովոյ պերճախօս գործունէութեան ակնապիշ սպասողն ու պատմագրողը :

ԱՁԴ

Արշալոյսի տպարանէն մաքուր թղթի վրայ շքեղ տպագրութեամբ արդէն լոյս տեսած է « ԱՁԿԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ » գիրքը, որը երկար տարիներէ ի վեր սպասած էր : Այս ութ ու կէս երկ-սիւնակ մեծագիր ֆօնտայով գիրքը Գահիրէի Հայոց նորակամ Հրատարակչական Ընկերութեան երախտարիքն է :

Կը վաճառուի « Արշալոյս » ի Խորհրդարանունը : Գինն է Երեմ Ծրակն :

ղութեամբ հայրը որ նորէն ոտքի կ'ելլայ . . . ծեծ կ'ուզէ, ծեծ . ծօ՛, ձայնդ քեզի քաչէ՛ հիմա քեզ ոտքիս տակը կ'առնեմ տէ կը սասկեցնեմ :

Ամեն կողմէն կը քաշեն կը բռնեն զինքը : — Կեցիք գուն . հեղե տուն երթանք աէ ես քեզի կը հասկցնեմ, շունչանորդի :

Այս սպանաւիթը կը սասակացնէ աղուն լացը . կարծես տունը ուսուցիչը ծեծին հաշտոյն ալ կանխիկ լալ կ'ուզէր :

Հինգ վայրկեան վերջը՝ խաղաղութիւնը կը վերաստատուի սենեակին մէջ : Տղան լացը մէկ կողմ ձգած՝ ալ կ'սկսի զինքը հանգարտեցնելու համար առջեւ լեցուած պտուղները ուտել . Սարգիս աղային գէմը կը պայծառանայ :

— Է՛ Սկամպիլի սկսինք, կ'ըսէ, սա թուղթերը բե՛ր նայինք, Արտեմ : Դուք ալ սա սեղանը հոս բեքէ՛ք, կ'ըսէ մէկ քանի երիտասարդներու : Աթոռներու շարժում մը . Արտեմ սեղանին վրայինները կը վերցնէ . սեղանը կը բերուի բազմոցին քովը, Պախալ Սարգիսին առջեւ :

Սկամպիլ : Ծամոցի մը եւ բամբասանքին հետ գլխաւոր ժամանցը այս տեսակ հաւաքումներուն : Պարզ մարդիկ որոնք քաղաք կամ բոլոր չ'են գիտեր, և եթէ գիտնային իսկ, իրենց նեղ սենեակներուն մէջ ի՞նչպէս պիտի կրնային պարիկ իրենց գէր մարմիններով : Սկամպիլը նստուկ, հանգարտ ու բարեմիտ խաղ, որուն կարելի է խօսակցութիւնն ալ խառնել, շատ կը յարմարի իրենց : Սկամպիլը Սարգիս աղային կ'երթնէր որ լաւ խաղացողի համբաւ մը կը

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Ն . Ի . Իշխան Ապպա փոշա Հիւմի առաջի օրը Խորհրդական Մէյլ շոգեհաւով Կ. Պօլիս մեկնեցաւ :

— Եգիպտական Քրէտի Ծօնսիէի ամսոյս 15 ին քաշուած վիճակահանութեան մեծ պարգևը (50000 ֆր .) հանրածանօթ Պարոն Աղեքսանդր Սիւրսօքի երկու որդիքը շահած են :

— Ալեքսանդրիոյ Գերման նորաբողբոջ գաղթականութիւնը աղջիկներուն ու մանչերուն համար երկրորդական ուսմանց վարժարան մը հիմնել առաջադրած է, յուսալով ընդունիլ նաև Գերման կառավարութեան ձեռնտուութիւնը : Հիւպատոսը շատ աշակից ու բարեհամբոյր ըլլալ կը թուի այս ծրագրի իրականացման համար :

— Հանրային Պարտուց վարչութիւնը համաձայնած է կառավարութեան 10,000 եգիպտ . ոսկու մի փոխատուութիւն ընել, որով անձրեւէ գոյացած ջուրերու համար հորերու պեղումներ պիտի կատարուին : Նոյն չափ մի գումար ևս յատկացուած է Աղէքսանդրիոյ նաւամատոյցը քարայտակելու համար :

— Քաթրո Քալլայի մէջ Ծիկիոյ Թիւթօի 11 դէպքեր տեղի ունեցած են :

— Ապու Հօմիճուսի մօտ բեռնաբարձ երկու կառախումբեր իրարու բաղխուած են . մարդու կորուստ չ'կայ :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՌՈՒՍՈՍ

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍՈՍ ՄԷՋ . — Թիֆլիզի Կառկալ լրագիրը կը հազորդէ թէ գործաւորական խուճեր կարմիր դրօշակ պարզած և հաւանքուած էին Առ.Սի հրապա-

վայիէր թաղին մէջ : Ամեն տուն եկողի հետ անպատճառ քառքի մը պիտի խաղար : Եւ այդ խաղը չ'գիտցող կամ չ'սիրող անձինք իր առջեւ յարգ ու պատիւ չ'ունէին :

Մեծ բոլորակ մը կազմուեցաւ սեղանին շուրջը կենով և էրիկ մարդով խառն : Ընկերները որոշուեցան :

— Զէ՛, ըսաւ բանջարավաճառ Գիրգորը . ևս Սարգիս աղային հետ չ'եմ ըլլար :

Ու տեղը փոխեց : Սովորական հակառակորդն էր Պախալ Սարգիսին : Միշտ յաղթելու հաստատ առաջադրութեամբ կը նստէր խաղի եւ գրեթէ միշտ ալ կը յաղթուէր :

— Անանկ է գիմացս անցի՛ր նայիմ, ըսաւ Պախալ Սարգիս, ասձկերէն լեզուաւ ասպարէզ կարգաւոր բանջարավաճառին :

— Ահա անցա՛յ, պատասխանեց այս վերջինը նշանակալից կերպով ոլորելով իր պոտմական պիսեքը, կարծես տալու համար անոնց սպանաւիթը երեւոյթ մը որմէ բազըր : — շատ գէշ էր իր բաղըր, շոտ գէշ — վախճալով՝ գար քուռէր և քննէր անոնց այս դիչեր ու սիրտ շահեր գանոնք :

Սարգիս Աղան նախ մէկիկ մէկիկ համբեց թուղթերը : Իր սովորութիւնն էր այս .

— 36, ըսաւ . թամամ :

Յետոյ սկսաւ խառնել . խառնեց խառնեց խառնեց, այնքան որ ծեղուկ կիւն մը

— Վու՛յ մերախ կ'ելլայ, Սարգիս աղա, ըսաւ .

— Դուն չ'իշխան, մարիկս չ'անոր մէջը պաշխալ բան կայ, ըսաւ նպարավաճառ խորհրդաւոր կերպով մը գլուխը երկրցնելով .

(Շարունակելի) ԳԻՏԱԿ

րակը . ոստիկանութիւնը միջամտեց . գործաւորներու և ոստիկանութեան մէջ ընդհարում տեղի ունեցաւ և տեղեկ քառորդ ժամ , երկու կողմէն շատերը վիրաւորուեցան ատրճանակի , դանակի և գաւազանի հարուածներով . քաղաքին կառավարիչը ժանսառնդոյի օժանդակութեամբ ոստիկաններու գործողութիւնները կը ղեկավարէր . Կովկասեան 11րդ զօրաբանակի միջամտութեամբ հաջիւ կարգը վերահաստատուեցաւ . 41 ձերբակալութիւններ տեղի ունեցան , որոնց մէջ կը գտնուէին մէկ Խարկովի , և երեք Բեթերսպուրկի Համալսարաններէն վերջին խոռովութիւններու պատճառաւ արձակուած ուսանողներ :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Բարեկամական կապակցութիւններ վերջացուած են Սուլթանին և Պարսից Շահին միջև . Ի մտայ Սուլթանը Պարսից Վեհապետին պիտի զրկէ զոյգ մը հոյակապ նրժոյգներ Վիզթորիա կոչուած շքեղ մի կառքով : Արդէն Սուլթանի ախոռապետ Մուհամմէտ Կաթիւ հասած է Պաթում Ապտիւլ Համիտի ձիերուն պէտք եղած ընդունելութիւններն ընելու համար , ուրկէ իր չորքոտանի ընկերներուն հետ պիտի մեկնի Թէհրան և Պարսից Շահին պիտի ներկայացնէ թանկագին ընծաները և Սուլթանի մի ինքնագիր նամակը :

Պալատական մի հրամանի համաձայն Պոլսոյ Բարձրագոյն Դուռը յետ այսօր արգիլած է տպարանական Մամուլի , տառերու , գրերու , ինչպէս նաև լուսանկարչական մեքենաներու մուտքն ի Թուրքիա :

ԳՈՐԾԱՌՈՐՈՒՀԻ ԿՈՒՋՈՒԻ

Գերձակուհի Տիկին Է . Ա . Ասլանեանի Աղբիւնի համար գործաւորուհիներու պէտքը կայ . փափաքողք կրնան դիմել իրեն բնակարանը ի Պապ-էլ-Լուք Հէլուանի կայարանին անկիւնը :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Հեղինակութիւն — ՍԻՄՈՆ ՖԵԼԷԿԵԱՆԻ
ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Բաւական ժամանակէ ի վեր տպագրութիւնը թէև աւարտած էր , սակայն ինչ ինչ պատճառներով հեղինակին կողմէն վաճառման տեղը որոշուած չլլալով ծանուցումը յապաղեցինք . ուստի տպագրական պարտաւորութիւն կը համարինք այժմ ծանուցանել անոր աւարտումը այն ընթացատէր ազգայնոց , որոնք կը սիրեն ազգու հայրենիք , և անոնց վերաբերեալ սրբտապառ սղբերգութիւն մը :

Սոյն երկասիրութիւնէն զինել փափաքողք կրնան դիմել Հեղինակին , որ ամենօր կէս օրէ վերջ ժամը 3 — 5 «Արշալոյ» ի Խմբագրատունը կը գտնուի :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՆԻ ՄԻՋՈՒԱ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՌՈՒՄ ԴՐԱՄԱԳՆՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼՈՆ . որ գրեթէ այլաբանի ուրիշ սրև է ընկերութենէ մէկ միլիար աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

Այլաբանի մէջ գտնուող ուրիշօր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յ'Աղեքսանդրիա :

ԳՈՐԾԱԿԱՆ Ի ՄՈՒՍԿԻ
—* ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ *—

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն , Պրիսթլ Սթրիթ Գիմաց , Գահէ Տը Լա Պուրսի կից :

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԻՆՈՒՆԻ


Այլաբանի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԻՐ ներն են և ասոնցմէ մինչև ցարք 17, 000, 000 ծախուած է :

400 է աւելի վկայականներով և մեսայններով վարձատրուած , երաշխաւորեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉՈՍՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱԿԱՆ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանկարի մէջ ստացած է :
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ **ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ**
ԱՐԲՈՒՆԻԲԻՆ **ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ**
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԱՏԻՎԱԿԱՆ ՑԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԻՐ ի յատկանշին :



Չրի դասեր և նորոգութիւններ , ՍԻՆԿԻՐ մեքենայից համար , յաճախորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն ինչմեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

196րդ . ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՔՐԷՏԻ ՅՕՆՍԻԷ ԷՃԻԲՍԻԷՆԻ
15 Մայիս 1901

124262	8553	10024	19243	27376
58426	72561	75257	83205	92953
126800	145651	149862	186409	189670
226576	238444	267277	269335	282432
284621	316308	326780	338627	381268
386054				

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՐԱԹ 17 ՄԱՅԻՍ 1901

6603	5713	1118	8350	2087	2592
803	2819	4838	7538	7562	9303
853	2907	4962	4086	7469	1526
2791	3973	3617	3669	7881	2868
2815 9604 7274					

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍԻ»
ՀԻՄՆԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ
Օսմանիյէ դեղատանի ղիւնայի փողոցին մէջ .

Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին .

Այցեխարտեր , Երջարտագաններ , Գիւտեր , Հրաւիրագրեր , Մանագրներ , Տեղեկագիրներ , Կանոնագիրներ , Տոմսեր և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ դրքերն .

1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա . Ե . Բ . պրակներն :
2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի Թուրքիա մուտքը , ինչպէս կը լսենք , արգիլուած է :
3. ՀԱԽԱՔԱՆՈՑ հայոց ժողովրդական երգերու :